ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱՒԱՌ

ԿԱՄ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Իմ կատարած պեղումները.—Նոր-Բայազէտի գաւառը հնագիտական տեսակէտից չափազանց հետաքրքրական է. այստեղ կան բազմաթիւ և բազմազան դամբաններ, որոնց մեծագոյն մասի պեղելու առաջնութիւնը ինձ վիճակուեց։ Անցեալ տարի մայիսի կիսից մինչև օգոստոսի կէսը օրական 20—25 մշակով ես պեղումներ կատարեցի առաւելապէս Սևանայ լճի հարաւ-արևմտեան ափերում, բացի 250-ից աւելի դամբաններ և գտայ բաւականաչափ բրոնզէ և երկաթէ իրեր, ինչպէս և 300 կաւէ ամաններ, որոնք այժմ առանձին ցուցադրուած են Կովկասեան թանգարանի Հնագիտական բաժնում։ Ցանկանալով առաջիկայ ամառ ևս պեղումներ կատարել նոյն լճի արևելեան և հիւսիսային ափերին, ես նախ կը նկարագրեմ կատարած պեղումներս յուշատետրի ձևով, երկրորդ՝ կը դասակարգեմ պեղած դամբաններս, երրորդ՝ կը որոշեմ թէ ինչ ժողովրդների կարող են պատկանել և ե՞րբ շինուած, չորրորդ՝ մանրամասն կը նկարագրեմ դրանց մէջ գտնուած իրերը, միանգամայն բացատրելով նրանց նշանակութիւնը և համեմատելով ուրիշ տեղերում գտնուած իրերի հետ և հինգերորդ՝ կանեմ իմ եզրակացութիւններս։

Արդ՝ ամենից առաջ, մայիսի 15-ին, ես սկսեցի պեղումներ կատարել Նոր-Բայազէտ քաղաքի շրջակայքում։ Այստեղից վեց կիլոմետր դէպի արևմուտք, Պատաշար կոչուած արտերի մէջ կան

---

[1]) Տես՝ «Ազգագրական Հանդէս» գիրք XIII.

բաւականաչափ դամբաններ (կուրգաններ), որոնցից մի քանիսը միայնակ կամ զոյգ զոյգ սփռուած են մանաւանդ դէպի հիւսիս, ուր նկատելի են նաև հին բնակութեան տեղեր։ Այսպիսի դամբաններ գտնւում են նաև Նոր-Բայազէտ քաղաքի շուրջը, ինչպէս «Խաչեր» կոչուած թաղամասից բարձր՝ Աւղանոցում, կամուրջից վերև, ջրաղացից փոքր ինչ բարձր, Ս. Յովհաննէս ուխտատեղու շրջականերում և այլն։ Այս խմբից ես կարողացայ պեղել միմիայն տասն և երկու հատ։ Սրանից 10 գտնւում էին Պատաշարում, իսկ երկուսը մօտ կէս վերստ դէպի արևելք, միմեանցից 43 մետր հեռաւորութեան վրայ։

Առաջին տասը դասաւորուած էին երեք շարքերով, արևմուտքից դէպի արևելք, միմեանցից 4-10 մետր հեռաւորութեան վրայ։ Պեղումներից նկատուեց, որ արևմտեանները համեմատաբար աւելի հին էին, քանի որ նրանց միջից միմիայն բրոնզէ իրեր էին գտնւում, իսկ աւելի արևելք գտնուողների միջից բրոնզէ իրերի հետ նաև երկաթէ իրեր։ Ընդհանրապէս դամբանները 11-13 մետր տրամագիծ ունէին, և դաշտից $1^1/_2$-2 մետր բարձրութիւն։ Իւրաքանչիւրը պատած էր քարէ երկու շրջապատով, մինը դամբանի եզրին, իսկ միւսը՝ դագաթին. վերջինիս տրամագիծը 2-3 մետր էր լինում։ Առաջին շրջապատի քարերն ընդհանրապէս մեծ են, իսկ երկրորդինը՝ փոքր։ Այս երկրորդ շրջանակը մի քանիսի վրայ ձուաձև է լինում, և երբ սրա մէջը $1^1/_2$-2 մետր խորութեամբ փորում էինք, բացւում էին սովորաբար երեք անագին մեծութեան քարեր, 2-3 մետր երկարութեան, 1-1,50 մետր լայնութեան և 18-32 սանտիմետր հաստութեան, որոնք ձգուած էին արևելքից արևմուտք։ Այսպիսի քարերի տակ գտնւում էր գերեզմանը՝ հիւսիսից հարաւ ձգուած և սովորաբար 2-3 մետր երկարութեան և 1,50 մետր լայնութեան, 2-3 մետր էլ խորութեան, բոլորն էլ քառանկիւնի, և բաւական մեծ քարերով պատ քաշած։ Գերեզմանը ամբողջովին լցուած էր մաքուր հողով, իսկ դիակների շուրջը նկատելի էր աւազ, որի շնորհիւ և ոսկորները բաւական լաւ էին մնացել։ Իւրաքանչիւր գերեզմանում կար 1-5 մարդկային կմախք, տաւարի և ոչխարի ոսկորներ, մինի մէջ ձիու ամբողջ կմախքը և այլն։ Ննջեցեալները թաղուած էին մեծ մասամբ պպզած դիրքով, կային նաև հիւսիսից հարաւ պառկած ձևով։ Բոլորի գանգերն էլ երկարագլուխ էին։

Առաջին շարքից ես պեղեցի միայն երեք դամբան, թողնելով մնացածներն աւելի հմուտ հնագէտի։ Սրանցից առաջինի տրամագիծն էր 11 մետր, բարձրութիւնը 1,44 մետր. գերեզմանի երկարութիւնն էր 2,16 մետր, լայնութիւնը 1,50 մետր, իսկ խո-

բութիւնը՝ մինչև երեսի երեք ահագին քարերը 1,44, իսկ մինչև գերեզմանի յատակը՝ 2,16 մետր։ Գերեզմանի մէջ կային վեց կմախք, բոլորն էլ պպզած ձևով. սրանցից երկուսը գտնուում էին հիւսիսային կողմում, մի մի արևելեան և հարաւային և երկուսը՝ արևմտեան կողմում։ Այս վերջին կմախքներից մինը երեխայի էր



ՆԿԱՐ 1

և թևին ունէր մի շատ գեղեցիկ բրոնզէ ապարանջան, և 3 մատանիներ՝ մատերին, վզի և ձեռների մօտ կային ուլունքներ։ Հիւսիսային կողմում, երկու կմախքների մօտ դրուած էր մի մեծ պուլիկ սև կաւից, 2 ունկով և վերան նախշեր։

Երկրորդ դամբանը (նկար 1) գտնուում է առաջնից 4 մետր հեռաւորութեան վրայ և նրանից փոքր ինչ մեծ է, տրամագիծն է 11 մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 3,24 մետր, լայնութիւնը 1,50 մետր, իսկ խորութիւնը 4,32 մետր։ Ծածկուած էր չորս պահագին քարերով։ Սրա մէջ կային մի տղամարդու և 2 կնոջ կմախքներ պպզած դրութեամբ, երկուսի գլուխը դէպի ներքև, կարթած ձեռներին յենած, իսկ երրորդինը դէպի արևելք ուղղուած։ Այս վերջիններիս թեների վրայ գտնուեցան 4 ապարանջաններ։ Կմախքների առջև երկու կարգ պուլիկներ էին հորած, իւրաքանչիւրում հինգ հատ, ապա դրուած էր մի մեծ կոտրուած կճուճ, որի միջից հողի հետ միասին դուրս եկաւ մի մարդկային կմախք։ Ապա երկու շարք դարձեալ կճուճներ, իւրաքանչիւրում վեց հատ։ Սրանց մօտ թաղուած էր մի մարդ՝ պառկած դրութեամբ, գլուխը արևելեան կողմում, իսկ ոտները արևմտեան։ Սրա կողքից ձգուում էր մի երկաթէ թուր 90 սանտիմետր երկարութեամբ, իսկ ոտների մօտ, հիւսիսից հարաւ, դրուած էր մի երկաթէ նիզակ։ Այս կմախքը երկարագլուխ էր և լաւ պահպանուել էր։ Սրա մօտ, նոյն ուղղութեամբ ձգուած էր մի ձիու կմախք, մէջքի վրայ, առաջի ոտները բերանի մօտ կապած, բերանին՝ երկաթէ սանձ։

Այս շարքի երրորդ դամբանը, որ նոյնպէս մօտ 4 մետր հեռու էր գտնուում երկրորդից, համեմատաբար փոքր էր, 8,50 մետր տրամագծով։ Գերեզմանի երկարութիւնն էր 1,80 մետր, լայնութիւնը 1,44 մետր, իսկ խորութիւնը 3,60 մետր։ Երեք ահագին քարերը վերցնելուց յետոյ հարաւ-արևմտեան անկիւնում երևեցաւ մի կմախք՝ պպզած դրութեամբ, երկարագլուխ, որի վրայ նկատուում են դաշոյնի և նիզակի հարուածների հետքեր. սրա աջ ձեռին եղել է մի գաւազան, որի գլուխը գտնուեց և որը բաւական նուրբ արուեստ է ներկայացնում. մէջքին կապած էր բրոնզէ գօտի՝ 3 սանտ. լայնութեան, և 80 սանտ. երկարութեան. ինչպէս երևում էր, մէջքի կողմը կաշով էր ամրացրուած, որովհետև մօտ 18 սանտիմետր երկարութեամբ շրջանը բաց էր։ Գօտու մօտ գտնուեց մի շատ գեղեցիկ դաշոյն, բրոնզէ պատեանի մէջ, մի հիանալի ապարանջան էլ թեին։

Սրա կողքին արևմտա-հարաւային անկիւնում կային երկու պպզած տղամարդու կմախքներ և մի գորշուկի գլուխ, իսկ սրանց բոլորի առջև, արևմուտքից դէպի արևելք ձգուում էր մի ուրիշ տղամարդու կմախք, որի կողքին կար մի երկաթէ երկար դաշոյն։ Փոքր ինչ հիւսիս անկանոն կերպով թափուած էին տաւարի ոսկորներ, և ապա երկու շարքով շարուած էին 8 պուլիկներ։

Երկրորդ շարքի չորս դամբաններից առաջինը 3,24 մետր

տրամագիծ ունէր, և 2 մետր բարձր էր դաշտից։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,50 մետր, իսկ խորութիւնը 3 մետր, ծածկուած 3 ահագին սալերով։ Գերեզմանի հարաւային կողմում կային երկու, մինը տղամարդու և միւսը կնոջ, պպզած կմախքներ, միմեանց շատ մօտ և երեսները միմեանց դարձրած։ Սրանցից մինի կողքին գտնուեց մի բրոնզէ դաշոյն, իսկ միւսի թեւերին ապարանջաններ։ Այս կմախքներից դէպի արևմտահարաւ կար միայն մի գանգ, երեսը դէպի սրանց ուղղած, իսկ դէպի արևելահարաւ մի պպզած մարդ՝ որի երեսը դէպի երկինք էր դարձրած։ Հիւսիսային կողմում 12 հատ պուլիկներ էին շարուած։

Սոյն շարքի երկրորդ դամբանը, որ առաջնից հաղիւ 2 մետր հեռու էր, 14 մետր տրամագիծ ունէր, և դաշտի երեսից 2 մետր բարձրութեան էր։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,50 մետր, իսկ խորութիւնը 3 մետր։ Սա ևս ծածկուած էր երեք մեծ սալերով։ Սրա հարաւային կողմում պպզած դրութեամբ կային երկու, տղամարդու և կնոջ, կմախքներ, երեսները միմեանց դարձրած, առջևում երկու շարք պուլիկներ, մինում 4, միւսում 3, որոնց մէջ կային գառան ոսկորներ։ Գերեզմանի միւս երեք կողմերումն էլ կային մի մի պպզած կմախքներ, որոնցից արևելեանի մօտ գտնուեց մի բրոնզէ գօտի և մի դաշոյն, ինչպէս և մի պուլիկ. արևմտեանի մօտ՝ երկու բրոնզէ ապարանջան և մի պուլիկ. իսկ հիւսիսայինի մօտ՝ մի մեծ կարաս։

Երրորդ դամբանը, որ նոյնպէս 2 մետր հեռու էր երկրորդից, (նկ. 2). 13 մետր տրամագիծ ունէր և 2 մետր բարձրութիւն դաշտից։ Գերեզմանը միւսներից շատ երկար էր, 3,60 մետր, իսկ լայնութիւնը նոյնն էր, 1,50 մետր, խորութիւնը 3 մետր. ծածկուած էր 4 ահագին սալերով։ Գերեզմանի հարաւային կողմում, մի շարքով գտնուում էին երեք տղամարդկանց պպզած կմախքներ, երեսները դէպի հիւսիս դարձրած։ Սրանցից առաջին երկուսի մօտ գտնուեցան մի մի բրոնզէ դաշոյն, իսկ երրորդի մօտ մի բրոնզէ երկժանի՝ աջ ձեռքին բռնած։ Առաջին կմախքի կողքին դրուած էր մի կուլա և մի թաս, իսկ երեք կմախքների առջև շարուած էին վեց պուլիկներ մի շարքով, որոնցից փոքր ինչ հիւսիս՝ մի մեծ քասա, որի թէ մէջը և թէ մանաւանդ շուրջը կային տաւարի ոսկորներ։ Երեք պուլիկներ էլ շարուած էին արևելեան պատին կից, որոնց մէջ կային ոչխարի ոսկորներ։

Չորրորդ դամբանը համեմատաբար փոքր էր, 11 մետր տրամագծով, բայց նոյն, 2 մետր բարձրութեան։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1,50 մետր, իսկ խորու-



Նկ. 2 ԴԱՄԲԱՆ ՆՈՐ-ԲԱՑԱԳԻՏ ՄՕՏ

թիւնը 1,50 մետրի։ Ծածկուած էր երեք սալերով։ Սրա հարաւային կողմում կային երկու, մի տղամարդու և մի կնոջ, պպզած կմախքներ, երեսները միմեանց դարձրած, առջևում նախ մի մեծ և ապա չորս փոքր պուլիկներ դրուած, որոնց մէջ կային տաւարի ոսկորներ։

Երրորդ շարքի առաջին դամբանը բոլորից մեծ էր և աւելի լաւ էր շինուած։ Նրա տրամագիծն էր 15 մետր, իսկ բարձրութիւնը դաշտի երեսից 2 մետր։ Գերեզմանի երկարութիւնը հասնում էր 4,32 մետրի, իսկ լայնութիւնը՝ 1,80 մետրի. խորութիւնը 3 մետրի։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած չորս ահագին սալերով։

Այս ահագին գերեզմանի մէջ հիւսիսից հարաւ պառկած էին երկու կմախքներ, մինը, որ տղամարդու էր, մեծ էր և պառկած էր աջ կողմի վրայ, ոտները ծալած, միւսը՝ որ կնոջ էր, աւելի փոքր էր, և պառկած էր ձախ կողքի վրայ, հետևապէս և երեսը դէպի տղամարդը դարձրած, ոտներն էլ ծալած ու տղամարդի ոտների վրայ դրուած։ Թէ տղամարդի և թէ, մանաւանդ, կնոջ վերայից մեծ քանակութեամբ կարմիր ուլունքներ գտնուե-

ցան, վրին, կրծքին և թեւերին։ Գլխների վերևն էլ պառկած էր մի երեխայի կմախք, ձեռներին կարմիր ուլունքներ։ Այս ահագին գերեզմանի մէջ այլ ևս ոչինչ չկար, ոչ բրոնզէ որևէ իր և ոչ մի որևէ կաւէ աման։ Երկու կմախքն էլ երկարագլուխ էին։

Ոչ պակաս ուշադրութեան արժանի էր նաև սրա մօտ գտնուած դամբանը, որ 11 մետր տրամագիծ ունէր և 2,16 մետր բարձրութիւն։ Գերեզմանի երկարութիւնն էր 2,16 մետր, լայնութիւնը 1,44, ուղղութիւնը՝ հիւսիսից հարաւ, ծածկուած մանր քարերով։ Հետաքրքրականը այն էր, որ մի մետր փորելուց յետոյ գտնուեց մի ֆալիւսաձև սև քար, մօտ 54 սանտիմետր երկարութեամբ և 25 սանտիմ. տրամագծով, պառկած դրութեամբ։

Ես այդ քարը ծանրութեան պատճառով չկարողացայ բերել Թիֆլիս, այլ թողի Նոր-Բայազէտ մի ուսուցչի մօտ։ Մէկ ու կէս մետր ևս փորելուց յետոյ գտնուեց միմեանց մօտ երկու երկարագլուխ, տղամարդու և կնոջ, պպզած կմախքներ, առաջներում հինգ պուլիկ դրուած, ուրիշ ոչինչ։

Միւս երեք դամբանների մէջ բացի հատու կտոր ոսկորներից և մանաւանդ ատամներից ուրիշ ոչինչ չգտնուեց։

Ցունիսի սկզբին ես տեղափոխուեցայ Ղշլաղ գիւղը, ուր մնալով մինչև նոյն ամսի վերջը՝ պեղումներ կատարեցի գիւղի շրջակայքում և՝ մանաւանդ Մանիչարի սքանչելի հովտում։ Ես այստեղ զանց եմ առնում նկարագրելու այս վայրերը, որովհետև այդ անելու եմ այս աշխատութեան տեղագրական բաժնում։

Այս գիւղից մի կիլոմետր դէպի արևելք և Սևանայ լճից 2 կիլոմետր դէպի արևմուտք «Աղբիներ» (ոչխար պահելու տեղ) կոչուած տեղում երկու շարքով ձգւում են արևմուտքից արևելք առաջնում 5, իսկ երկրորդում 3 դամբաններ։ Թէ սրանցից ներքև, և թէ վերև նոյնպէս կան դամբաններ, միայն դասաւորուած են մէկ մէկ կամ երկ-երկու։ Այս խմբից ես պեղել տուի առաջին շարքից հինգը, իսկ երկրորդից՝ երկուսը։ Այս դամբանների վրայ թմբեր չկան, երևի շրջակայքից փոքր ինչ բարձր դիրքի վրայ գտնուելու պատճառով, քամու ազդեցութեամբ կամաց կամաց հողը տարուել է, և քարերը մնացել են ցցուած։

Այս առաջին շարքի արևմտեան ծայրի առաջին դամբանը բոլորից փոքր էր, 3 մետր տրամագծով. գերեզմանի երկարութիւնն էր 1½ մետր, լայնութիւնը 72 ս. և խորութիւնը 1½ մետր։ Սրա մէջ երևեցաւ մի երկարագլուխ տղամարդու կմախք՝ պպզած դիրքով, կողքին 3 հատ պուլիկ։

Երկրորդ դամբանը 3,60 մետր տրամագիծ ունէր. գերեզմանը 2½ մետր երկարութիւն, 1½ մետր լայնութիւն և 2 մետր խո-



Նկ. 3 ԴԱՄԲԱՆ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ՄՕՏ ՂՇԼԱՂՈՒՄ.

բութիւն։ Երկաթեան մեծ երկաթը Յեան չորս ահագին քարեր ձգուած էին գերեզմանի վրայ, որ ձգուում էր հիւսիսից հարաւ։ Սրա հարաւ-արևելեան անկիւնում պպզած դրբութեամբ գրտնուում էին մի տղամարդու և մի կնոջ երկարագլուխ կմախքներ, որոնց երեսները միմեանց էին դարձրուած և ձեռները միմեանց վզով փաթուած։ Սրանցից փոքր ինչ հեռու, հարաւային կողմում, կար նոյնպէս մի պպզած կնոջ կմախք, որի մօտից գտնուեցին մի բրոնզէ ապարանջան, մի գնդասեղ և մի քիչ ուլունք։ Առաջին երկու կմախքների առջև արևմուտքից արևելք միմեանց վրայ դարսուած էին երեք մարդու կմախքներ, որոնց գլուխները կըտրուած էին և գերեզմանի մէջ տեղում մի շարքով շարուած, հիւսիս արևելքից հարաւ արևմուտք ուղղութեամբ. առաջինի երեսը ուղուած էր դէպի արևմտա-հարաւ, միջինինը դէպի արևմուտք, իսկ երրորդինը՝ դէպի արևելահիւսիս։

Այս բոլոր գանգերն էլ երկարագլուխ էին։ Գերեզմանում ոչ մի պուլիկ չկար դրուած։

Նոյն շարքի երրորդ դամբանի տրամագիծն էր 5 մետր, իսկ գերեզմանի երկար. 3 մետր, լայն. 1,80 մետր, խոր. 2,16 մետր։ Ծածկուած էր 4 ահագին քարերով։ Գերեզմանի մէջ կար միայն մի տղամարդու երկարագլուխ կմախք, հիւսիսից հարաւ ուղղուած և երեսը դէպի արևմուտք դարձրած։ Սրա ձեռին կար մի գաւազանի գլուխ, բրոնզէ, բաւական գեղեցիկ։ Գերեզմանում ուրիշ ոչինչ չգտնուեց։

Նոյն շարքի չորրորդ դամբանը բաւական մեծ էր, տրամագիծը հասնում էր 6 մետրի, գերեզմանի երկարութիւնն էր 3 մետրը, լայն. 1½ մետր, իսկ խորութիւնը 3 մետր։ Այս ահագին գերեզմանի մէջ տեղում գտնուեց մի կնոջ երկարագլուխ կմախք, պպզած դրութեամբ, երեսը դէպի հարաւ ուղղուած։ Հիւսիսային և հարաւային կողմում շարուած էին չորսական պուլիկներ։

Սոյն շարքի հինգերորդ դամբանը ամենամեծն էր, 8 մետր տրամագծով. բուն գերեզմանը 2,16 մետր երկարութիւն, 72 ս. լայն. և երկու մետր խորութիւն ունէր, և 3 մեծ քարերով ծածկուած էր։ Սրա հարաւային կողմում դարսուած էին մի շարքով երեք պուլիկներ և սրանց առաջ 3 երկարագլուխ, պպզած կմախքներ, որոնցից մէջ տեղինի ձեռի վրայ կար մի բարակ բրոնզէ ապարանջան, իսկ միւս երկուսի մօտ դրուած էր դարձեալ մի մի պուլիկ։ Գերեզմանի մէջ տեղում կար մի կնոջ և մի տղամարդու երկարագլուխ կմախք, դարձեալ պպզած դրութեամբ, որոնցից աջակողմեանի, այսինքն տղամարդու, մօտ գտնուեց մի բրոնզէ դաշոյն, իսկ ձախակողմեանի, այսինքն կնոջ, մատներին 3 մատանի, թևին մի ապարանջան, և ոտին՝ երկու ապարանջան, լայն բրոնզէ ժապաւէնով ամրացրած։ Հիւսիսային կողմում էլ դրուած էր 2 շարքով 6 պուլիկ։

Երկրորդ շարքի առաջին դամբանից ոչինչ դուրս չեկաւ, երկրորդի տրամագիծն էր 5 մետր. գերեզմանի երկար. 2½ մետր, լայն. 90 ս. և խոր. 1,80 մետր։ Գերեզմանը, միւսների հակառակ, ուղղուած էր արևելքից արևմուտք, և ծածկուած 3 ահագին քարերով, որ ձգուած էին հիւսիսից հարաւ, մինչդեռ միւս գերեզմանների քարերը ձգուած էին արևելքից արևմուտք։

Այս գերեզմանի հարաւ արևմտեան անկիւնում գտնուում էր մի երկարագլուխ կնոջ կմախք, պպզած ուղղութեամբ, որի մօտից գտնուեցան ուլունքներ, իսկ մէջ տեղում պառկած դրութեամբ կար մի ուրիշ կնոջ կմախք, գլուխը արևելեան կողմը, իսկ ոտ-

ները՝ դէպի արևմուտք։ Սրա թևի վրայից գտնուեց մի հաստ, բրոնզէ ապարանջան։

Աղբիւրներից ես անցայ դարձեալ դէպի արևելահարաւ, գիւղից մօտ 4, իսկ Սևանայ լճից մօտ մի կիլոմետր հեռու, և Մանիչարի բլրակի երկու լանջերին ու սրանից մօտ 100 մետր դէպի արևմուտք, նոյնպէս մի ցածրադիր, բայց ընդարձակ բլրի արևելահայեաց լանջին գտայ մի քանի խումբ դամբաններ։ Սրանցից ես պեղեցի միմիայն 22 հատ։

Այս դամբանները ևս շրջապատուած լինելով մեծ մեծ քարերով, գետնից $1^1/_2$ մետր բարձրութիւն ունէին։ Գրեթէ բոլորն էլ ուղղուած էին հիւսիսից հարաւ, ծածկուած լինելով 3-4 մեծ սալերով, որոնք ձգուած էին արևելքից արևմուտք։ Այս սալաքարերը բացւում էին 72 սանտիմետրից—$1^1/_2$ մետր փորելուց յետոյ։ Գրեթէ բոլոր գերեզմաններն էլ 2 մետր երկարութեան, $1^1/_2$ մետր լայնութեան և 2 մետր խորութեան էին լինում։ Դուրս եկած կմախքներն առանց բացառութեան երկարագլուխ էին և մասամբ լաւ պահուած, այնպէս որ ինձ յաջողուեց մի քանիսը վերցնել ինձ հետ։ Բոլորն էլ վերաբերում են բրոնզի դարին, որովհետև բացի այդ մետաղից, ուրիշը չգտնուեց դրանց մէջ։

Սրանցից 16 առանձին ուշադրութեան արժանի չեն, որովհետև սրանց մէջ լինում էին 2 կամ 3 պպզած կմախքներ, մի երկու պուլիկ և մի քանիսի մէջ մի երկու հասարակ ապարանջան։ Մնացածներն արժանի են առանձին ուշադրութեան, ուստի և ես կը նկարագրեմ մի առ մի։

Առաջին դամբանի տրամագիծն էր 6 մետր, գերեզմանի երկարութիւնը 3,24 մետր, լայնութիւնը $1^1/_2$ մետր և խորութիւնը 3 մետր։ Ծածկուած էր 3 մեծ սալաքարերով։ Սրա հարաւ արևելեան անկիւնում պպզած ձևով գտնուեցան 3 երկարագլուխ կմախք, կողքին մի պուլիկ, հարաւ—արևմտեան կողմում երկու պպզած, նոյնպէս երկարագլուխ կմախք, բոլորի երեսներն էլ դէպի հարաւ ուղղուած. վերջիններից առաջնի թևին կար մի ապարանջան, միւսի մօտ, արևմտեան կողմում մի փոքրիկ քասա, մօտին մի կարաս բերնքսիվայր դրուած, որի մէջ պպզած ձևով մի փոքրիկ երեխայի կմախք, ձեռին մի բրոնզէ ապարանջան։ Այս կարասի արևելեան կողմը կար մի պուլիկ, մէջը մի մանկան ծղիկ՝ բրոնզէ ապարանջանը վերան։ Սրա կողքին էլ մի ուրիշ պպզած կմախք, մի ապարանջան թևին։ Սրա մօտ, արևմտեան պատի ուղղութեամբ շարուած էին մի քասա և չորս պպզած՝ երկարագլուխ կմախքներ, որոնցից առաջնի մօտ գտնուեց մի գաւազանի երախակալ։ Արևելեան կողմում դարձեալ պպզած ձե-

ւով գրուած էին նախ երկու և ապա մի պզած, երկարագլուխ կմախքներ. վերջինիս մատից դուրս եկաւ 3 մատանի։ Հիւսիսային պատին կից, արևմուտքից արևելք ուղղուած էր մի ուրիշ երկարագլուխ կմախք, որի կողքին գտնուեց մի մեծ բրոնզեայ դաշոյն։ Այս կմախքից փոքր ինչ հեռու, հիւսիս-արևելեան անկիւնում կար մի պզած երկարագլուխ կմախք, զարդարուած 2 գինդով, մի մանեակով, 4 մատանիով, 2 խխունջէ զարդով։ Իսկ հիւսիս արևմտեան անկիւնում մի ուրիշ պզած կմախք, թևին երկու և ոտին մի ապարանջան, վերջինիցս կախուած է եղել նրա մօտ ընկած փոքրիկ զանգականման զարդը։ Գերեզմանի մէջ տեղումն էլ կար մի պզած կմախք, թևին մի ապարանջան, և առաջը մի փոքրիկ թաս։ Այս բոլորը բացուեցան մի մետր խորութեան մէջ։ Շարունակելով պեղումը 36 սանտիմետրաչափ, գտայ գերեզմանի մէջ տեղում երկու պզած, երկարագլուխ կմախք, հարաւ արևելեան կողմումն էլ կար մի պզած երկարագլուխ կին, վզին մանեակ, ականջին մի գինտ և թևին մի ապարանջան։ Հիւսիս-արևմտեան կողմում նոյնպէս մի երկարագլուխ, պզած կմախք, ձեռին մի ապարանջան, կողքին 3 պուլիկ։ Վերին և ներքին շարքերի կմախքների փթածութեան մէջ առանձին զանազանութիւն չէր նկատւում։

Սրան միանգամայն կից կար և մի ուրիշ դամբան, որ արտաքուստ կրում էր բոլոր նշանները, սակայն միջից ոչինչ դուրս չեկաւ, չնայելով որ հիմնովին պեղեցինք։

Ուշադրութեան արժանի երկրորդ դամբանը 2,16 մետր երկարութեան, 1,08 մետր լայնութեան և 2 մետր խորութեան էր։ Սրա հարաւային պատի երկու անկիւններում գտնուեցան մի մի, իսկ հիւսիսային կողմի անկիւններին երկերկու երկարագլուխ կմախքներ՝ պզած դրութեամբ։ Մի կմախք էլ, դարձեալ երկարագլուխ, պառկած էր հարաւ-արևմտեան անկիւնում պզած կմախքի առջև, արևմուտքից արևելք։ Այս գերեզմանի տիրուհին հաւանօրէն հարաւ-արևմտեան անկիւնում թաղուածն է եղել, որովհետև նա լիովին զարդարուած էր իւր դարի գրեթէ բոլոր զարդերով, այսպէս ականջներին կային կլոր գինտեր, վզին երկու մանեակ, մէջքին կար մի բրոնզէ գօտի, որից հաւանականօրէն կախուած են եղել նրա մօտ գտնուած զանգականման և կիսալուսնաձև և կարապանման պանդըլոկները և մի դաշոյն։ Աջ ձեռին կար 7 հատ ապարանջան, որոնցից առաջինը տափարակ էր, իսկ միւսները կլոր։ Մատների վրայից հաւաքուեց 30 մատանի, որոնցից տասը հինգ հինգ շարուած էին երկու մատի վրայ։ Ոտներին ևս կային երկու ապարանջան։ Սրա մօտ գտնուեց նաև

մի գնդասեղ։ Թէ այս կմախքի և թէ հարաւ-արևելեան անկիւնի կմախքի մօտ դրուած էին մի մի պուլիկ։ Մի պուլիկ էլ դրուած էր հիւսիս-արևմտեան անկիւնի մի կմախքի մօտ։ Միւս հինգ կմախքների մօտ ոչ մի զարդարանք չգտնուեց։

Ուշադրութեան արժանի երրորդ դամբանի երկարութիւնն էր 2,16 մետր, լայնութիւնը 1,08 մետր, իսկ խորութիւնը 2 մետրը։ Ինչպէս առաջինները, այնպէս և սա ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած միմիայն մի 3 մետր երկարութեան և մօտ $1\frac{1}{2}$ մետր լայնութեան քարով։ Սրա մէջ, միմեանց վրայ, 18 սանտիմետրաչափ հողաշերտով բաժանուած թաղուած էին 18 կմախք, իւրաքանչիւր շարքում ինն-ական։ Բոլորն էլ պպզած էին, երեսները դէպի հարաւ դարձրած։ Առաջին շարքի հարաւ արևելեան անկիւնում թաղուածը, որ նոյնպէս պպզած էր, ծնկների վրայ երկու ձեռով բռնած ունէր մի փոքրիկ կաւէ աման; որի մէջ խնամքով դարսուած էին նրա զարդերը.—9 ապարանջան, երկու գինտ, 6 մատանի, երեք հատ բաղանման պանդըլոկ, մի գնտասեղ և բաւականաչափ ուլունքներ։ Միւս կմախքների մօտից ոչինչ չգտնուեց։ Բոլորն էլ երկարագլուխ էին։

Չորրորդ դամբանի երկարութիւնն էր 3 մետր, լայնութիւնը $1\frac{1}{2}$ մետր և խորութիւնը 2,16 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 մեծ սալաքարերով։ Սրա հարաւային կողմում կային երկու, տղամարդու և կնոջ, երկարագլուխ կմախքներ, պպզած և երեսները միմեանց դարձրած, առաջները մի պուլիկ։ Փոքր ինչ հեռու, արևելեան կողմում, հիւսիսից հարաւ պառկած էին նոյնպէս երկու, տղամարդու և կնոջ, կմախքներ, որոնցից կնոջ թևերին գտնուեցան երկու բրոնզէ ապարանջան, 5 մատանի և ուլունքներ։ Սրանց կողքին երկու շարքով դրուած էին երեքական պուլիկներ։ Ապա մի շարքով դալիս էին 3 պպզած մարդկանց կմախքներ, բոլորի երեսներն էլ դէպի հարաւ դարձրուած, մինի գլխի վրայ և միւսի ոտների տակ մի մի քասա դրած։ Երրորդի թևերից դուրս եկաւ 2 բրոնզէ ապարանջան։

Սրանց մօտ ևս, արևելքից դէպի արևմուտք, երեսը դէպի հարաւ դարձրած պառկած էր մի ուրիշ կմախք, իւր կողքին ունենալով երկու պպզած կմախքներ, երեսները միմեանց, այսինքն մինը հարաւ, միւսը հիւսիս, դարձրած։ Սրանց մէջտեղում դրուած էր մի պուլիկ։ Արևմտեան կողմի կմախքից դուրս եկաւ 2 բրոնզէ ապարանջան և 2 մատանի։ Վերջին կմախքը գտնուում էր հիւսիսային պատի մօտ պպզած դրութեամբ և երեսը դէպի հարաւ դարձած, կողքին մի պուլիկ։ Այս կմախքի երկու թևին կային

մի մի տափակ ապարանջան, մի մատին 5, միւս 3 մատերին էլ երկական մատանիներ։

Հինգերորդ դամբանը համեմատաբար փոքր էր, մի մետր երկարութեան, 72 սանտիմետր լայնութեան և 1,08 մետր խորութեան։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած միայն մի մեծ քարով։ Սրա մէջ հարաւից դէպի հիւսիս, երեսը դէպի արևմուտք պառկած էր մի տղամարդու կմախք, որի հարաւային կողմում կար մի կնոջ և մի երեխայի կմախք, երկուսն էլ պզած դրութեամբ։ Կնոջ կմախքի թևից գտնուեց մի ապարանջան, իսկ երեխայի մատներից չորս մատանի, բոլորն էլ բրոնզից։

Վեցերորդ դամբանը բացուեց սրանցից փոքր ինչ հեռու, «Թազա-աղբլ» կոչուած լանջում, լճից մօտ կէս կիլոմետր հեռու։ Սրա երկարութիւնն էր 2,50 մետր, լայնութիւնը 90 սանտիմետր և խորութիւնը 2,16 մետր։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 մեծ քարերով։ Գերեզմանի գրեթէ մէջտեղում, հիւսիսից հարաւ, մի շարքով, բայց միմեանցից մօտ 36-ական սանտիմետր հեռու դրուած էին չորս տղամարդկանց կմախքներ, չորսն էլ պզած ձևով և երեսները դէպի հարաւ ուղղուած, մօտերին մի մի պուլիկ։ Սրանցից հարաւային պատի մօտ պզածի վրայ գտնուեց մի բրոնզէ գօտի, որ 11 սանտիմետր լայնութիւն և 65 սանտիմ. երկարութիւն ունէր, և սրանից էլ կախուած էր մի երկաթէ դաշոյն։ Այս կմախքի աջ ձեռին կար մի բրոնզէ դաշոյն, որի վրայ սահել անցել էր թևի ապարանջանը, իսկ ձախ կողքի վրայ դրուած էր մի բրոնզէ նիզակ, դարձեալ բրոնզէ օղակով։ Երրորդ կմախքի մօտ գտնուեց մի ֆիբուլ, ձեռին երկու ապարանջան, մինը լայն, միւսը կլոր, միւսին՝ 3 ապարանջան, երեքն էլ կլոր, մի դաշոյն, մի թուր և կողքին՝ մի նիզակ, բոլորն էլ երկաթէ։ Չորրորդի մօտ կար բրոնզէ մի գօտի, մի դաշոյն, և երկաթէ մի նիզակ։

Եօթերորդ դամբանը գտնուում էր Մանուչարի սարի լանջին։ $1^1/_2$ մետր երկարութեան, 90 սանտիմետր լայնութեան և $1\,1/_2$ մետր խորութեան էր, ծածկուած 3 քարերով։ Սրա մէջ տեղում մի գծով շարուած էին վեց տղամարդկանց կտրուած գլուխներ, և նոյնչափ մարմիններ միմեանց վրայ դարսուած գերեզմանի հարաւային կողմում։ Այս բոլոր կմախքների միջից գտնուեց միմիայն 3 բրոնզէ մատանիներ։ Նկատելի էր, որ կմախքները շատ մեծ էին, գլուխները բոլորն էլ երկար։

Մանիչարից փոքր ինչ հեռու, Ղուսղուլի կոչուած տեղում պեղեցի երեք դամբան, սակայն այստեղ բացուեցան միմիայն կմախքներ պզած ձևով, իսկ երեք կամ ամանեղէն՝ ոչ մի հատ։

ՀԱԿ. Ս. Ա. Ֆ. Ա. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՂԵԼՈՒՆԻ ОБЩЕСТВО

Անհամեմատ հետաքրքրական էին այն դամբանները, որ գտնուում էին նոյն Ղշլաղ գիւղի արևելեան լանջին, նրանից մօտ 25 մետր, իսկ լճից մօտ 4 կիլոմետր հեռու, «Աղբրի-գլոխ» կոչուած տեղում։ Ընդհանրապէս այս դամբանները համեմատաբար աւելի նոր ժամանակի էին, որովհետև շատ գերեզմաններում բրոնզի իրերի հետ գտնուում էին նաև երկաթէ իրեր, միայն կատարելապէս փթած։ Այստեղ ևս կան բաւականաչափ դամբաններ, որոնցից ես պեղեցի միայն ինը։ Սրանցից առանձին ուշադրութեան արժանի են միայն հետևեալները.

Առաջին դամբանի տրամագիծը հասնում էր 8 մետրի, իսկ բարձրութիւնը գետնի երեսից հազիւ $1^1/_2$ մետրի. շրջապատուած էր միջակ մեծութեան քարերով։ (Տես առանձին թերթի վրայ տպուած 4 նկարը)։

Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ. երկարութիւնն էր 7 մետր, լայնութիւնը 1,80 մետր և խորութիւնը 2,16 մետր. ծածկուած էր 7 մեծ սալաքարերով։ Սրա մէջ ես գտայ 32 մարդկային, 2 ձիու, 2 շան, 1 կատուի, 1 այծի և մի քանի ոչխարի կմախքներ, և 32 հատ պուլիկներ, չհաշուած կոտրուածները։ Այս գերեզմանի հարաւային կողմը, մօտ մի մետր երկարութեամբ առանձնացրուած էր 58 սանտիմետր բարձրութիւն ունեցող երեք քարերով։ Այս մասի վերայ ձգուած էր ամենալաւ և ամենալայն սալը, որ 2,16 մետր երկարութիւն ունէր և 1,44 մետր լայնութիւն։ Այս մասում, արևմուտքից արևելք ուղղուած պառկած էր մի տղամարդ՝ աջ կողքի վրայ, երեսը հարաւ դարձրած։ Այս կմախքի մօտ, հարաւային կողմում պպզած դրութեամբ կային մի կնոջ և մի երեխայի կմախք, և սրանց մօտ՝ մի կոտրուած և մի ամբողջ պուլիկ։ Պատի մօտ գտնուում էին 3 տղամարդու կմախքներ՝ պպզած, և երեսները դէպի հարաւ դարձրած. սրանց առաջ դրուած էին երեք պուլիկ։ Այս կմախքներից մինի մօտ գտնուեց մի բրոնզէ ապարանջան և մի երկաթէ դաշոյն։ Պառկած տղամարդի հիւսիսային և հարաւային կողմերում գտնուում էին նաև մի մի կանացի կմախք, պպզած դրութեամբ, որոնցից մինի մօտ կար 2, իսկ միւսի մօտ միայն մի պուլիկ։ Առաջին կմախքի երեսը դարձուած էր դէպի հարաւ, իսկ երկրորդինը՝ արևելք։

Այս շրջապատից դուրս՝ դէպի հիւսիս՝ միմեանցից 72 սանտիմետր հեռու կային երկու զոյգ պպզած կմախքներ։ Իւրաքանչիւր զոյգը բաղկացած էր մի տղամարդուց և մի կնոջից, որոնց երեսները միմեանց էին ուղղուած և ամէն մինի առաջը մի պուլիկ էր դրուած։ Վերջին զոյգի վրայից գտնուեց զանգականման

բրոնզէ պանդըլոկ և երկու երկաթէ ապարանջան։ Սրանցից փոքր ինչ հիւսիս, արևմտեան պատի մօտ, մի մեծ քասի (լայն և ցածր աման) մէջ դրուած էր երկու դանգ, երեսները վերև դարձրած, իսկ սրանց մարմինների կմախքները գտնուում էին այս քասի տակ։ Այս վերջինների հանդէպ, արևելեան կողմում, կար մի ուրիշ պպզած կմախք, որի գլխին դրուած էր մի քասա։ Արևմտեան պատի մօտի կմախքների մօտ գտնուեց մի կատուի գանգ, մօտը՝ մի տղամարդու կմախք, պպզած դրութեամբ, առջևը մի պուլիկ։ Սրանից էլ փոքր ինչ հեռու կար երկու, տղամարդու և կնոջ, կմախքներ, երեսները դէպի հարաւ ուղղուած և ամեն մինի առաջ երկու պուլիկ դրուած։ Այս երկու կմախքներից մինի վրայ ես գտայ մի զանգականման, բրոնզէ պանդըլոկ։ Սրանցից էլ փոքր ինչ հիւսիս-արևելք, կար մի ուրիշ, տղամարդու կմախք, նոյնպէս պպզած, միայն երեսը դէպի արևելք ուղղուած. մօտը ընկած էր մի երկաթէ դաշոյն և դրուած էր մի պուլիկ։ Սրա կողքին կար նաև մի կնոջ կմախք, պպզած և երեսը դէպի հարաւ ուղղուած. ձեռին կար մի բրոնզէ ապարանջան, իսկ առջևը՝ երկու պուլիկ։ Այս կմախքների մօտ արևմուտքից արևելք պառկած էր մի տղամարդու կմախք, որի մօտ և նոյն ուղղութեամբ ձգուում էր մի ձիու կմախք, որի գագաթի մօտ կար մի պուլիկ, իսկ փոքր ինչ հեռու՝ թաղուած էր երկու պուլիկ, մինի մէջ ոչխարի գանգ. սրանցից փոքր ինչ հեռու երևացին 2 պպզած կմախքներ, տղամարդու և կնոջ, երեսները միմեանց դարձրած, մօտերը արդէն կոտրտուած պուլիկներ։ Սրանցից հիւսիս-արևմուտք, միմեանց վրայ դարսուած էին մարդկային հինգ կմախքներ, որոնց գլուխները մի շարքով շարուած էին արևմտեան պատի երկարութեամբ, դէպի հիւսիս ուղղուած։ Սրանց շուրջը քարեր էին դարսուած։ Այս գանգերի առջև կային մի կնոջ և մի տղամարդու կմախք, պպզած դրութեամբ և երեսները միմեանց դարձրած. սրանց մօտ՝ մի քասա. փոքր ինչ հեռու՝ մի շան կմախք, կողքին մի երեխայի կմախք, պպզած և երեսը դէպի հիւսիս դարձրած։ Այս կմախքի մօտ դրուած էր մի պուլիկ և մի կաւէ ձէթի-ճրագ [1])։ Այս կմախքի վրայ ես գտայ երեք մատանի և մի ֆիբուլ։ Սրանից փոքր ինչ հիւսիս-արևելք գտնուում էր մի կնոջ կմախք, պպզած ձևով, երեսը դէպի հիւսիս, առջևում մի պուլիկ, իսկ կողքին մի կարասի կտոր. ձեռների վրայ գտնուեցան երկու ապա-

1) Երեխայի կմախքի մօտ դրուած ճրագը յիշեցնում է մի բնորոշ սովորութիւն, որ այժմ էլ հայերիս մէջ կատարուում է.— երեխային թաղելիս՝ ձեռին մոմեր են տալիս, որպէսզի միւս աշխարհ գնալիս՝ մոմերը ճանապարհը լուսաւորեն։

բանջան, ականջներին՝ օղեր, և մատներին՝ մատանիներ։ Սրանից յետոյ ձգւում էին մի շարք կենդանիների կմախքներ. նախ արևելեան կողմում պառկած էր մի ձիու կմախք, որի երախը ուղղուած էր դէպի արևելք. գանգի վրայ կար մի տեսակ բրոնզէ զարդարանք. յետոյ, փոքր ինչ հեռու մի մեծ քասի մէջ դրուած էր մի այծի գանգ և կողքին՝ մի շան կմախք։ Ձիու կմախքի մօտ կար չորս պուլիկ, որոնցից երկուսը միմեանց մէջ էին դրուած։ Մի պուլիկ էլ այս երկուսի հանդէպ, ձիու գանգի ձախ կողմում կար։ Շան գանգի մօտ, արևմտեան անկիւնում, կային երկու, մի տղամարդու և մի կնոջ, պպզած կմախքներ, որոնցից փոքր ինչ արևելք ընկած էր մի կատուի գլուխ։ Այս երկուսի երեսներն էլ ուղղուած էին դէպի հիւսիս և առաջներն ունէին 4 պուլիկ։ Սրանց վրայից ես գտայ մի երկաթէ դաշոյն և երկու բրոնզէ ապարանջան։

Այս ահագին դամբանի մօտ ես պեղեցի մի ուրիշ դամբան, որի տրամագիծը հաւասար էր 3,60 մետրի և շատ քիչ բարձր էր գետնից։

Գերեզմանի երկարութիւնն էր 2,16 մետր, լայնութիւնը $1^1/_2$ մետր, և խորութիւնը $2^1/^2$ մետր։ Նա ուղղուած էր արևելքից արևմուտք, և ծածկուած երեք մեծ սալերով։ Սրա մէջ, մէջքի վրայ արևելքից արևմուտք պառկած էր մի երկարագլուխ մարդու կմախք, որի հարաւային, հիւսիսային և արևելեան կողմերում գտնւում էին երկերկու կանացի կմախքներ, բոլորն էլ պպզած դրութեամբ։ Հիւսիսային կողմի կմախքների երեսները ուղղուած էին հարաւ և սրանց առջև կային երեք պուլիկ. այս կմախքներից մինի մօտ ես գտայ մի ֆիբուլ և 3 մատանիներ։ Հարաւային կողմի կմախքների երեսները նոյնպէս հարաւ էին դարձրուած և սրանց մօտ էլ կային երեք պուլիկներ, որոնցից երկուսը կոտրուած էին, իսկ երրորդը քառանկիւնի է և ուշադրութեան արժանի։ Այս կմախքների վրայ էլ ես գտայ 2 բրոնզէ ապարանջան և 5 մատանի։ Արևելեան կողմի կմախքները նայում էին դէպի արևելք և իրենց առջևում ունէին երեք կոտրտուած պուլիկներ։

Այս դամբանի մօտ ևս գտնւում էր մի ուրիշ դամբան, $3^1/_2$ մետր տրամագծով, և շատ քիչ բարձր գետնից։ Գերեզմանի երկարութիւնը հասնում էր 2,16 մետրի, լայնութիւնը 1,08 մետրի, և խորութիւնը 1,80 մետրի։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 սալով։ Գերեզմանի մէջ տեղում, հարաւից հիւսիս, կրծքի վրայ պառկած էր մի երկարագլուխ աղամարդու կմախք, որի հարաւային և արևելեան կողմերում կային մի մի կնոջ



Курганъ близъ Новобаязета

նկ. 4 Գաղթական Դեղպալէ (Գար-Բաղչէ des kr. 18)

Sépulture près de Nevobayazit.

կմախք, պպզած դրութեամբ։ Պառկած կմախքի մէջքին կար մի բրոնզէ գօտի, որից ամրացրած էր եղել երկաթէ դաշոյնը, իսկ ձախ կողմում դրուած էր բրոնզէ գեղեցիկ մի նիզակ։ Ոտներին կար երկու երկաթէ ապարանջան, իսկ մատներին՝ հինգ բրոնզէ մատանիներ։ Սնարի մօտ, պպզած կմախքի շուրջը գտնուեցան վեց պուլիկներ, իսկ արևելեան կողմում չորս պուլիկ։ Բացի այս իրերից, գերեզմանի արևելեան կողմում թափուած էին ոչխարի և տաւարի ոսկորներ։

Այս խմբի դամբաններից ուշագրաւ են նաև հետևեալները, որոնք համեմատաբար աւելի նոր են։

Մի դամբան, որի տրամագիծը հասնում էր 3 1/2 մետրի և գետնից 72 սանտիմետր միայն բարձրութիւն ունէր, ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երեք մեծ սալերով ու կրով։ Գերեզմանի երկարութիւնն էր 1,80 մետր, լայնութիւնը՝ 90 սանտիմետր և խորութիւնը 2 մետր։ Գերեզմանի հարաւային կողմում գտնուում էին երեք պպզած կմախքներ՝ մինը տղամարդու, միւսը կնոջ, իսկ երրորդը՝ երեխայի. բոլորն էլ երեսները հիւսիս էին դարձրած։ Մի քիչ հեռու գտնուում էր չորրորդ կմախքը, որ կնոջ էր և նայում էր դէպի հարաւ։ Սրանց առջևում կար նաև մի ուրիշ կնոջ կմախք. պպզած և երեսը դէպի վեր ուղղած։ Այս կմախքի երկու մատներին ես գտայ ութ բրոնզէ մատանի՝ ձեռին երկու նոյնպիսի ապարանջան։ Սրա առջևում դրուած էին հինգ պուլիկ, որոնցից մինի մէջ մոխիր կար և պուլիկի մի մասն էլ վառուած էր։ Բանուոր գիւղացիների ասելով այս մոխիրը ոչ թէ փայտի, այլ քաքորի էր։ Խիզախութիւն չէր լինիլ արդեօք ենթադրել, որ այդ հին ժամանակներում ևս այս կողմերը զուրկ են եղել անտառներից և բնակիչներն ստիպուած են եղել այժմեան պէս՝ քաքոր վառել։

Միւս դամբանը կլոր էր, 1,80 մետր տրամագծով և նոյնքան խորութեան։ Ծածկուած էր երեք քարերով։ Հարաւային և հիւսիսային կողմերում մէջքերի վրայ պառկած էին երկական կմախքներ, և իւրաքանչիւր զոյգի մէջտեղ դրուած էին երկական պուլիկներ։ Հարաւային կողմի կմախքի վրայ ես գտայ մի երկաթէ դաշոյն և 2 երկաթէ ապարանջան. հիւսիսային կմախքների վրայ 7 երկաթէ ապարանջան։

Մի ուրիշ գերեզման ուղղուած էր արևելքից արևմուտք, նրա երկարութիւնը հասնում էր 2,16 մետրի, լայնութիւնը 1,80 մետրի, իսկ խորութիւնը՝ 1 1/2 մետրի. ծածկուած էր երեք սալերով։ Նրա արևելեան կողմում գտնուում էր մի, իսկ արևմտեան և հիւսիսային կողմերում երկական պպզած երկարագլուխ կմախք-

ներ, որոնցից միայն արևմտեան կողմում եղածի վրայ ես գտայ մի երկաթէ մատանի և մի երկաթէ ֆիբուլ. ոչ մի պուլիկ չկար։

Աղբիւրի անմիջապէս գլխին եղած դամբաններից ամենից ուշագրաւները հետևեալներն են.

Առաջին գերեզմանը տարածւում էր հիւսիսից հարաւ և ծածկուած էր երեք մեծ քարերով. նրա երկարութիւնն էր 2,16 մետր, լայնութիւնը 1 $^1/_2$ մետր, և խորութիւնը 2,25 մետր. Մէջտեղում պպզած էր մի երկարագլուխ տղամարդու կմախք, մօտը՝ մի. շան կմախք, պառկած։ Գերեզմանի հարաւային կողմում գտնուում էին երեք կանանց կմախքներ, պպզած ձևով, որոնց մօտ կար մի պուլիկ, մէջը և շուրջը ոչխարի ոսկորներ։ Փոքր ինչ հեռու կար նաև մի քասա, որի մէջ դրուած էր մի մարդկային գանգ, շուրջը՝ միքանի պուլիկներ։ Վերոյիշեալ երեք կմախքների վրայ ես գտայ երկու ապարանջան, 3 մատանի և մի գօտի, բոլորն էլ բրոնզից։ Գերեզմանի հիւսիսային կողմում կար 4 պուլիկ և մի մեծ կարաս, վերջինս լի ծովային խխունջներով։

Միւս գերեզմանի երկարութիւնն էր 1,80 մետր, լայնութիւնը՝ 1$^1/_2$ մետր և խորութիւնը 2,20 մետր։ Մէջ տեղում գտնուում էին երկու կմախքներ՝ մի տղամարդու և մի կնոջ, պպզած դրութեամբ, երեսները միմեանց դարձրած։ Գերեզմանի հարաւային կողմում ևս կային երեք պպզած կմախքներ, իսկ հիւսիս-արևմտեան անկիւնում՝ մի պպզած տղամարդու կմախք, որի մօտ թաղուած էին երկու պուլիկներ։

Թէպէտ և Ղշլաղում կային ուրիշ շատ դանբաններ ևս, սակայն ես բաւական համարեցի այսքան պեղածս և յուլիսի սկզբին անցայ Նորադուզ։

Նորադուզից դէպի հիւսիս, մօտ 3 կիլոմետր հեռու, Քռաներ կոչուած տեղում, որ լճից հեռու է մի կիլոմետր, պեղեցի 9 դամբան, որոնցից առաջինը շատ մեծ էր, 6 մետր տրամագծով. վերան մեծ սալաքարեր չկային այլ աւազախառն մանր քարեր. բացուեց մի գերեզման, չորս բոլորից պատ քաշած. սրա երկարութիւնն էր 3,60 մետր, լայնութիւնը 2,90 մետր։ Երեք մետր պեղելուց յետոյ՝ արևմտեան կողմում գտնուեցան ձիու ահագին ատամներ, փոքր ինչ հեռու էլ մի վանակատէ դանակ։ Միքիչ էլ խորացրինք՝ ջուր դուրս եկաւ. այն ժամանակ ամբողջ դամբանը խաչաձև կտրել տուի, սակայն ոչ մի ամբողջական կմախքի չպատահեցի։ Երևի սաստիկ հին լինելու պատճառով կմախքներն արդէն հող էին դարձել, որովհետև պատահում էին ատամներ, սաստիկ փտած վէգեր և այլ ոսկրի կտորներ։ Սրա մօտ գտնուող միւս չորս դամբաններն էլ սրա նման էին, թէպէտ և սրանից

փոքր։ Սակայն սրանց միջից վերոյիշեալ ատաճներից էլ չգտնուեցան։

Այս դամբաններից մօտ 70 մետր դէպի հարաւ, նոյն դաշտի մէջ, պեղեցի ուրիշ չորս դամբան էլ, որոնց բոլորի մէջ ևս գտնուեցին թէ կմախքներ և թէ զանազան իրեր։ Սրանցից առաջինի երկարութիւնն էր $1^1/_2$ մետր, լայնութիւնը 1,08 մետր և խոր. $1^1/_2$ մետր, ծածկուած երկու մեծ սալաքարերով։ Գերեզմանն ուղղուած էր հիւսիսից հարաւ։ Հիւսիսային անկիւնում կային 2 պըպզած, երկարագլուխ կմախքներ, մինը միւսի վրայ դրած, երկուսի երեսներն էլ դէպի հարաւ դարձրած։ Վերևի կմախքի մօտ գտնուեց մի բրոնզէ մատանի, մի ապարանջան և մի պուլիկ։

Երկրորդ դամբանը, որ նոյնպէս հիւսիսից հարաւ էր ուղղուած և 2 մետր երկարութիւն, $1^1/_2$ մետր լայնութիւն և 2 մետր խորութիւն ունէր, ծածկուած էր 3 մեծ և տափակ քարերով։ Սրա հարաւային կողմում պպզած դրութեամբ կային 8 կմախք, բոլորի երեսներն էլ դէպի հարաւ դարձրուած։ Սրանց յետևը կար 2 պուլիկ, որ կոտրուած էին։ Արևելեան կողմում, հիւսիսից հարաւ պառկած էր մի կմախք, աջ կողքի վրայ։ Սրա մօտից գտնուեց 3 գլնտ, 2 թևի և 2 ոտի ապարանջան, 3 մատանի և մի գաւազանի գլուխ։

Հիւսիսային կողմումն էլ կար մի պուլիկ, որի մօտ կային տաւարի և ոչխարի ոսկորներ։

Երրորդ դամբանը նոյնպէս 3 մետր երկարութեան, $1^1/_2$ մետրը լայնութեան և $2^1/_2$ մետր խորութեան էր, ծածկուած երեք մեծ սալերով։ Սրա հարաւային կողմում կային 6 պպզած կմախքներ, որոնցից առաջին զոյգի երեսները դարձած էին դէպի հարաւ, երկրորդ զոյգինը դէպի հիւսիս և երրորդինը դէպի արևմուտք։ Սրանց մօտ կար 3 պուլիկ։ Հիւսիսային կողմում ևս կային երկու պպզած կմախք, երեսները դէպի հարաւ դարձրած և մօտերը մի պուլիկ դրած։ Արևելեան կողմումն էլ կար մի ձիու կմախք, հիւսիսից հարաւ պառկած և մօտը երկու պպզած կմախքներ, երեսները դէպի ձին, մինի մօտին մի երկաթէ դաշոյն, իսկ միւսի մօտ մի պուլիկ։

Չորրորդը աւելի նորագոյն գերեզման էր, ուղղուած արևելքից արևմուտք և ծածկուած միայն մի տափարակ քարով։ Չորս կողմն էլ փոխանակ պատի, ունէր միայն մի մի սալ քար։ Երկարութիւնն էր 1,80 մետր, լայնութիւնը 72 սանտիմետր, խորութիւնը 1,08 մետր։ Սրա մէջ արևմուտքից դէպի արևելք, մէջքի վրայ պառկած էր մի կմախք, նոյնպէս երկարագլուխ, որի կողքից

գտնուեց մի երկաթէ դաշոյն, մնարի մօտից մի պուլիկ, և ոտնե-
րի մօտից մի կաւէ ձիթի ճրագ։

Նորագուղի արևելեան կողմին, Ѣorգեօլ կոչուած տեղում, լճի անմիջապէս ափին պեղեցի տասը դամբան, որոնցից չորսը գտնուում էին լճի ափին, հազիւ 7 մետր հեռու, երեքը սրանց զուգահեռական, միայն մօտ 22 մետր հեռու, իսկ մնացած երկքը սրանց ուղղահայեաց։ Առաջին չորսը, որ դասաւորուած էին լճի անմիջապէս ափին, 3—4 մետր տրամագիծ ունէին, բոլորն էլ շրջապատուած բաւական մեծ քարերով, և ծածկուած երկական կամ երեքական սալերով։ Երեք գերեզմանների չորս կողմը պատ կար քաշուած, իսկ մէկինը ոչ։ Գրեթէ բոլորի երկարութիւնն էլ երկական մետր էր, 1—1½ մետր լայնութիւնը և 2—3 մետր խորութիւնը. բոլորն էլ հիւսիսից հարաւ ուղղուած։ Սրանց միջից ոչ մի կմախք չգտնուեց, այլ միմիայն վանակատի (աբսիդիան) դանակի կտորներ, մի երկու յոկած քար և ուրիշ ոչինչ։ Կարելի է ենթադրել, որ սրանք այնքան հին են եղել, որ բոլոր կմախքները հող են դարձել։ Սոյն վիճակի մէջ էին նաև սրանց զուգահեռական 3 գերեզմանները։ Մնացած 3 դամբաններից առաջինը ուղղած էր արևելքից արևմուտք. 1,62 մետր երկարութիւն ունէր, 1,08 մետր լայնութիւն և 1½ մետր խորութիւն։ Սրա արևելեան կողմում պպզած դրութեամբ կային չորս զոյգ, տղամարդու և կնոջ և մի երեխայի կմախքներ, բոլորն էլ երկարագլուխ, երեսները միմեանց դարձուած։ Հարաւային կողմում էլ կար մի պպզած տղամարդու կմախք, երեսը դէպի հիւսիս. սրա մօտից գտնուեց 2 բրոնզէ ապարանջան, մի բաղանման պանդըլոք, և մի պուլիկ։

Երկրորդն ուղղուած էր հիւսիսից հարաւ, 2,16 մետր երկարութեան, 1,08 մետր լայնութեան և 1½ մետր խորութեան էր, ծածկուած 3 սալաքարով։ Սրա հիւսիսա-արևելեան անկիւնում կային մի տղամարդու և մի կնոջ պպզած կմախք, երեսները միմեանց դարձրած, մօտերը մի մի պուլիկ։ Հիւսիս-արևմտեան անկիւնում ևս պպզած էին դարձեալ մի կնոջ և մի տղամարդու կմախք, երեսները միմեանց դարձրած, միայն առաջներում մի պուլիկ։ Այս վերջին զոյգի առջև, արևմուտքից դէպի արևելք, երեսը դէպի հիւսիս դարձրած պառկած էր մի տղամարդու կըմախք, ունենալով աջ թևին մի բրոնզէ ապարանջան, և առջևում մի պուլիկ։ Սրա կողքին պպզած դրութեամբ կար մի կնոջ կըմախք, երեսը դէպի հիւսիս դարձրած և երկու ձեռներին մի մի բրոնզէ ապարանջան։

Երրորդ գերեզմանը նոյնպէս ուղղուած էր հիւսիսից հարաւ.

1,62 մետր երկարութիւն, 90 սանտիմետր լայնութիւն և 1,08 մետր խորութիւն ունէր, ծածկուած 3 մեծ սալաքարերով։ Սրա հիւսիսային կողմում կային պզած ձևով 3 կնոջ կմախքներ, որոնց երեսները դէպի հարաւ էին ուղղուած։ Հարաւային կողմումն էլ մի պզած կնոջ կմախք կար, կողքին դրուած մի բրոնզէ գօտի և 7 հատ բրոնզէ ապարանջան։

Այս դամբանների մօտ բարձրանում է մի քարաբլուր, որի արևմտահայեաց լանջի վրայ ևս կան դամբաններ։ Սրանցից ևս պեղել տուի չորսը, որոնց երեքից ոչինչ չգտնուեց, թէպէտ և արտաքուստ շրջապատուած էին մեծ մեծ քարերով և ծածկուած երեքական սալերով, սակայն ներքուստ պատեր չկային։ Վերջին գերեզմանը կլոր էր, պատով պատած, 1,80 մետր տրամագծով և 3 մետր խորութեան։ Վերան ծածկի քարեր չկային։ Սրա արևելեան և արևմտեան կողմերում բացուեցան մի կնոջ և մի տղամարդու պզած կմախք, երեսները դէպի հարաւ դարձուած։ Սրանց միջև դարսուած էին չորս պուլիկներ։ Արևմտեան կողմի կամ տղամարդու մօտ գտնուեց մի բրոնզէ դաշոյն և մի ապարանջան։ Սրա մօտ կուտակուած էր տաւարի ոսկորներ, որոնց մէջից գտնուեց 13 բրոնզէ նետ։

Նորադուզ գիւղում, հինաւուրց, միակ կամուրջի մօտ, գետի ձախ ափին, փոքրիկ բարձրութեան լանջին բացուեցան երկու տեսակի գերեզմաններ. առաջնում ննջեցեալը դրուած է մի կամ երկու կարասի, երկրորդում, վեց տափարակ քարերի մէջ։ Առաջին տեսակը պատահում է բարձրութեան ստորին մասում, գետին մօտիկ, երկրորդը աւելի բարձրում։ Եթէ մի կարասի մէջ է, (նկ. 5) կարասը կանգնեցրած է, կմախքը պզած ձևով դրած մէջը և բերանը մի սալ քարով ծածկուած։ Կմախքի երեսը դէպի հարաւ է դարձրած։ Եթէ երկու կարասի մէջ է, (նկ. 6) այն ժամանակ կարասները բերան բերանի են դրուած հիւսիսից հարաւ ուղղութեամբ և սրանց երկուսի մէջ երկարացրած է մարդը, երեսը դարձեալ դէպի հարաւ դարձրած։ Այս կարասների միջից կամ կողքից դուրս են գալիս մանր պուլիկներ։ Այս բոլոր կմախքներն էլ երկարագլուխ են։

Երկրորդ տեսակի գերեզմանները բաղկացած են վեց տափակ սալերից, որոնց մէջ պզած դրուած է մի մի կմախք, մօտը սովորաբար մի պուլիկ։ Այսպիսի մի գերեզման բացուեց նաև ջրի աջ ափին, հայկական հին գերեզմանատան ստորոտում։

Նորադուզից անցայ Քիւսահբղ գիւղը, ուր կատարեցի հետևեալ պեղումները.

1. Գիւղի արևմտա-հարաւային կողմը, դաշտի մէջ բացի 4

դամբան, որոնք միմեանց միանգամայն նման էին։ Արտաքուստ ներկայացնում էին փոքրիկ թմբեր, շուրջանակի քարով պատած։ 1—1½ մետր փորելուց յետոյ բացւում էին մի մի կարաս կանգ-



ՆԿ. 4 ՄԻ ԿԱՐԱՍԵԱՆ ԳԵՐԵԶՄԱՆ

նած դրութեամբ և քարէ տալերով ծածկուած։ Կարասի մէջ լինում էր միայն մի կմախք պպզած ձևով, ուրիշ ոչինչ։ Նկատելի էր, որ կմախքի երեսը դէպի հարաւ էր դարձուած, գանգն էլ երկարագլուխ էր։ Կմախքները սաստիկ փտած էին։

II. Գիւղի արևելեան կողմը, երկու բարձր լեռների գոգաւորութեան մէջ և լեռների լանջերին կան բազմաթիւ դամբան-



Նկ. 6 ԵՐԿԱՐԱՍԵԱՆ ԳԵՐԵԶՄԱՆ

ներ, որոնցից շատերը գիւղացիներն արդէն բացել են։ Ես այստեղում բացանել տուի 14 դամբան։ Կարևոր եմ համարում յիշել, որ այս դամբանների հանդէպ, առաջին լերանլանջին կայ մի հին ամրոց, որի կրկնակիպարիսպների ճեղքերը ցիկլոպային շինութիւնների նմանութիւն են տալիս։ Այստեղ կան նաև միքանի քարայրեր, և արհեստական այրեր։ Տեղ տեղ նկատելի են շինութեան հետքեր, ինձ չաջողուեց գտնել այստեղ ժանհիրներ։

Իմ պեղած դամբաններից առաջինը երեք մետր տրամագիծ ունէր և մի մետր միայն բարձրութիւն, շուրջանակի ծածկուած մեծ մեծ քարերով։ Գերեզմանի երկարութիւնն էր 90 սանտիմետր, լայնութիւնը 72 սանտիմետր, իսկ խորութիւնը 1,08 մետր, ծածկուած էր մի մեծ սալ քարով և ուղղուած հիւսիսից հարաւ։ Գերեզմանի հիւսիսային կողմում կար մի երկարագլուխ կնոջ կմախք, պպզած դրութեամբ, երեսը դէպի

հարաւ ուղղած։ Սրա աջ ձեռքից գտնուեց մի բրոնզէ ապարանջան, ինչպէս նաև միքիչ ուլունք։ Քսան սանտիմետրաչափ ևս պեղելուց յետոյ, նոյն գերեզմանի հարաւային կողմում բացուեց մի, նոյնպէս երկարագլուխ, տղամարդու կմախք, պպզած դրութեամբ, երեսը դէպի հարաւ ուղղուած և կողքին մի պուլիկ դրուած։

Երկրորդ դամբանի տրամագիծն էր 4 1/2 մետր։ Սա միւսների պէս հիւսիսից հարաւ չէր ուղղուած, այլ կլոր էր, 2,16 մետրը տրամագծով և միմիայն 72 սանտիմետր խորութեան։

Սրա մէջ կային վեց կմախքներ, որոնցից չորսի երեսները դէպի հարաւ էին դարձրած, իսկ երկուսը դէպի արևելք։ Առաջին չորսը տղամարդկանց էին, իսկ վերջին զոյգը՝ տղամարդու և կնոջ. վերջիններիս մօտից գտնուեց մի մատանի, մի բրոնզէ ապարանջան և մի երկաթէ նիզակ, ինչպէս նաև մի պուլիկ, որ դրուած էր սրանց առջև։

Երրորդ դամբանի տրամագիծն էր 3 մետր, իսկ բարձրութիւնը 72 սանտիմետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1 1/2 մետրը, լայնութիւնը 72 սանտիմետր և խորութիւնը՝ 1 1/2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երկու մեծ սալերով։ Հարաւային կողմում պպզած դրութեամբ կային մի տղամարդու և մի կնոջ կմախքներ, երեսները դէպի հիւսիս դարձրած, առաջներում միայն մի պուլիկ դրուած։ Ձախակողմեան, կնոջ, կմախքի վրայից գտնուեց մի բրոնզէ ապարանջան, մի մատանի և միքանի ուլունքներ։

Չորրորդ դամբանի տրամագիծն էր 5 մետր, բարձրութիւնը մի մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1 1/2 մետր, լայնութիւնը մի մետր և խորութիւնը՝ 1 1/2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երկու սալով։ Սրա մէջ ևս, հարաւային կողմում, կային մի տղամարդու և մի կնոջ պպզած, երկարագլուխ կմախքներ, որոնց առաջ դրուած էր մի պուլիկ, մէջը մի բրոնզէ ապարանջան և միքանի ուլունքներ։

Հինգերորդ դամբանի տրամագիծն էր 3 մետր 60 սանտիմետր, բարձրութիւնը 72 սանտիմետր։ Գերեզմանը կլոր էր, 90 սանտիմետր տրամագծով, խորութիւնը մի մետր։ Ծածկուած էր մի մեծ սալով։ Գերեզմանի մէջ տեղում պպզած դրութեամբ կար մի երկարագլուխ կնոջ կմախք, երեսը դէպի հարաւ դարձրած, առջևում մի պուլիկ։

Վեցերորդ դամբանի տրամագիծն էր 3 1/2 մետր, իսկ բարձրութիւնը 72 սանտիմետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1 մետրը 80 սանտիմետր, լայնութիւնը 72 սանտիմետր և խորութիւ-

նը 1 1/2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երկու մեծ սալերով։ Սրա մէջտեղում բացուեցին մի տղամարդու և մի կնոջ երկարագլուխ կմախքներ, պպզած և երեսները միմեանց դարձրած. արևելեան կողմումն էլ երկու երեխաների կմախքներ, նոյնպէս պպզած ձևով։ Առաջին զոյգի առջև դրուած էր մի պուլիկ, իսկ երեխաների առջև մի կաւէ ափսէ։ Կնոջ կմախքի վրայից գտնուեց մի բրոնզէ ապարանջան, մի նոյնպիսի մատանի և միքանի ուլունքներ։

Եօթներորդ դամբանի տրամագիծը 4 1/2 մետր էր, բարձրութիւնը 72 սանտիմետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր 16 սանտիմետր, լայնութիւնը 1 1/2 մետր, իսկ խորութիւնը 2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երեք մեծ սալերով։ Գերեզմանի մէջ կար 9 մարդու կմախք, որոնք դասաւորուած էին այսպէս. հարաւային կողմում երեքը, իսկ միւս կողմերում երկական. բոլորն էլ պպզած էին։ Հարաւային կողմի կմախքներից աջակողմեանը տղամարդու էր, մէջքին ունէր մի բրոնզէ գօտի, և մօտը՝ մի բրոնզէ նետ։ Ձախակողմեանը կնոջ էր, և կրծքին կային ուլունքներ, մատներին 3 մատանի։ Սրա մօտի կմախքը տղայի էր։ Սրանց բոլորի երեսներն ուղղուած էին դէպի հիւսիս, իսկ արևելեան կողմը թաղուածների գլուխները յետև էին շրջուած։ Միւս երկու զոյգերից իւրաքանչիւրն իրար էր նայում. և հիւսիսային կողմի զոյգի մէջտեղ դրուած էր մի մեծ գաւ, իսկ արևմտեան զոյգի մէջտեղ մի թաս, կարծես առաջին զոյգը գինի էր ածել թասի մէջ և հրամցրել երկրորդ զոյգին։

Ութերորդ դամբանի տրամագիծն էր 3 մետր, բարձրութիւնը 70 սանտիմետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1 1/2 մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը 1 մետր 80 սանտիմետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած մի մեծ սալով։ Գերեզմանի մէջտեղում պպզած էին մի տղամարդու և մի կնոջ երկարագլուխ կմախքներ, երեսները դէպի հարաւ դարձրած, ձախ կողքին մի փոքրիկ երեխայ, առաջները մի կաւէ քասա։ Աջակողմեան (տղամարդի) կմախքի մօտից դուրս եկան մի բրոնզէ դաշոյն, իսկ ձախակողմեանի մօտից երկու բրոնզէ ապարանջան։ Մի նոյնպիսի ապարանջան էլ երեխայի ձեռին էր։

Մնացած վեց դամբաններն էլ միանգամայն սրանց նման էին, կմախքները պպզած ձևով և մօտերը մի երկու պուլիկ։ Մի երկու բրոնզէ մատանի և միքանի ապարանջան հազիւ էին գտնուում սրանց միջից։

III. Այս Գոլերից փոքր ինչ արևմուտք, մօտ 400 մետր

հեռու, Պառաւի վանքի ստորոտում, պեղել տուի հինգ գերեզման, որոնք միանգամայն նման էին վերոյիշեալ II խմբի գերեզմաններին։ Սրանք ևս 3—4 մետր տրամագիծ ունէին և 1—1 1/2 մետր բարձր էին գետնից։ Գերեզմանների երկարութիւնը հասնում էր 1 1/2—2 մետրի, լայնութիւնը 72 սանտիմետրից մինչև 1 1/2 մետրի և խորութիւնը 1—1 1/2 մետրի։ Բոլորն էլ ուղղուած էին հիւսիսից հարաւ և ծածկուած 2—3 սալերով։ Սրանց բոլորի մէջ էլ կմախքները 2—3 աւելի չէին լինում, բոլորն էլ պպզած դրութեամբ և երկարագլուխ։ Միքանիսի միջից դուրս եկան մի կամ երկու պուլիկ և միքանի բրոնզէ մատանի և ապարանջան, միքանիսի մէջ էլ, բացի կմախքներից, ուրիշ ոչինչ չկար։

IV. Աւելի նորագոյն տիպի էին այստեղից մօտ 3 կիլոմետր հեռու, դէպի հիւսիս գտնուող Վերին Գոլեր և Նաւեր կոչուած տեղերի դամբանները, որոնցից պեղեցի տասն և հինգ հատ։ Սրանք բոլորն էլ ուղղուած էին հիւսիսից հարաւ և ներփակում էին նոյն ուղղութեամբ պառկած միմիայն մի մի կմախք. միայն մինի միջից դուրս եկաւ մի պուլիկ, և միքանիսի միջից՝ մի քանի ուլունք։ Առանձին ուշադրութեան արժանի են սրանցից երկուսը։ Առաջնի տրամագիծը 13 մետր էր, բարձրութիւնը 1 1/2 մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1,16 մետր, լայնութիւնը 1 1/2 մետր և խորութիւնը 2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած մի տափարակ սալով, որ 3,24 մետր երկարութիւն և 3 մետր լայնութիւն ունէր։ Սրա մէջ պառկած էր մի երկարագլուխ տղամարդու կմախք՝ հիւսիսից հարաւ և առջևում դրուած էր մի պուլիկ։

Երկրորդ դամբանը 5 մետր տրամագիծ ունէր և գետնից միայն մի մետր բարձրութիւն։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 1 1/2 մետր և խորութիւնը 2 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած մի մեծ սալով, որ 3 մետր երկարութիւն և 2 մետր լայնութիւն ունէր, 18 սանտիմետր էլ հաստութիւն։ Սրա մէջ ևս միմիայն մի երկարագլուխ կնոջ կմախք կար, հիւսիսից հարաւ ուղղուած և կրծքի մօտ միքանի ուլունքներ։

Բազմաթիւ դամբաններ կան նաև Քիւսաճղից դէպի հարաւ, հազիւ հինգ կիլոմետր հեռաւորութեան վրայ ընկած Բաշքենտ գիւղում։ Սակայն ենթադրելով, որ սրանք էլ այս տիպի կլինին, ես աւելորդ համարեցի պեղել։

Այստեղից յուլիսի 2-ին անցայ Երանոս, որ գտնւում է աւելի հարաւ, մօտաւորապէս 28 կիլոմետր հեռու, լճի ափից մօտ 5 կիլոմետր հեռաւորութեան վրայ։

Այստեղ առաջին օրը քսան մշակով սկսեցի պեղել երկու-

դամբան, որ գտնուում էին գիւղից դէպի հարաւ—արևմուտք, մօտ երկուսուկէս կիլոմետր հեռու, մի սարահարթի վրայ։ Այս երկու դամբանները միմեանց մօտ էին, հազիւ 11 մետր միմեանցից հեռու, սակայն հեղեղատը նրանց բաժանել էր մի նեղ և խորը փոսով։ Երկուսն էլ միմեանց շատ նման էին և գրեթէ միաչափ։ Երկուսն էլ կլոր էին, շուրջանակի մեծ մեծ քարեր գցած, իսկ մէջտեղում 3—4 հատ շատ մեծ քարեր ցցած։ Տրամագիծն էր 22 մետր, իսկ բարձրութիւնը մօտ մի մետր։ Ինձ թւում էր, որ շարունակ փչող քամին տարել է սրանց վրայի հողը։ Որոշելով այս դամբանների կենտրոնները, մօտ 3 մետր խորութեան և 2 մետրից աւելի երկարութեան և նոյնքան լայնութեան փորեցինք։ Հողը լիցք էր, և շատ հեշտութեամբ փորւում էր։ Բացուեցան ահագին մեծութեան սալաքարեր, որոնց վերցրինք մեծ դժուարութիւններով, մինի մէջ էլ պատահեցանք մի ահագին, 3 $^1/_2$ մետրը երկարութեան և 2 մետր լայնութեան և 70 սանտիմետր հաստութեան քար, որ երկարութեամբ կանգնեցրած էր հիւսիսից հարաւ։ Ենթադրելով թէ սա գերեզմանի պատը կարող է լինել, ես պեղել տուի ինչպէս արևելեան, այնպէս և արևմտեան կողմը, սակայն վերջի վերջոյ հասանք իսկական գետնին, առանց գտնելու ոչ գերեզմանի պատեր և ոչ կմախքներ, միայն նկատեցի, որ ներքին շերտում հողի գոյնը փոխուեց։

Այստեղից հազիւ 200 մետր հեռու դէպի արևելք, փոքր ինչ բարձր սարահարթի վրայ նկատելի են նոյն ձևի, միայն աւելի փոքր դամբաններ, սակայն ես նրանց ձեռք չտուի։

Հետևեալ օրը ես ուղևորուեցի դէպի լճի ափը և այստեղ գտայ մի ընդարձակ նեկրոպոլ, ուր պեղեցի միայն ութը դամբան։ Սրանք բոլորն էլ միակերպ էին, կլոր թմբեր $^1/_2$—1 մետր բարձրութեան և մօտ 3 մետր տրամագծով, շուրջը միջակ մեծութեան քարեր շարուած և գագաթը մանր քարերով ծածկուած։ Մօտ մի մետր փորելուց յետոյ բացւում էին 1—3 սալեր, որոնց տակ գտնւում էր գերեզմանը, քառանկիւնի, մօտ 2 մետր երկարութեան և 1—1 $^1/_2$ մետր լայնութեան։ Անտաշ քարերով չորս պատ են քաշուած, որոնց մէջ դրուած էին մի մի երկարագլուխ կմախքներ, հիւսիսից հարաւ ուղղուած, առաջներում մի մի կաւէ պուլիկներ, հողով լի։

Աւելորդ չեմ համարում կրկնել, որ ինչպէս այս, այնպէս և իմ պեղած բոլոր գերեզմանները հողով լի էին։

Աւելի ևս մօտենալով լճին, նրանից մօտ 100 մետր հեռաւորութեան վրայ ես գտայ մի շարք ուրիշ դամբաններ, որոնք ձգւում էին միքանի շարքերով, իւրաքանչիւրում 3—4 հատ։ Ես

այս շարքերից էլ պեղեցի 3 դամբան, որոնք նոյնպէս միմեանց միանգամայն նման դուրս եկան։ Սրանք ևս կլոր էին, գետնից մինչև մի մետր բարձր, տափարակ գագաթով, միայն մանր քարերով ծածկուած. շուրջանակի միջակ մեծութեան քարեր շարուած։ Գագաթից 1—1½ մետր փորելուց յետոյ բացւում էին սալ քարեր, որոնց ներքև գտնւում էր գերեզմանը, դարձեալ հիւսիսից հարաւ ուղղուած և անտաշ քարերով ու հասարակ ցեխով պատեր քաշած։ Իւրաքանչիւր գերեզմանի երկարութիւնն էր 2 մետրը, լայնութիւնը 1½ մետր, իսկ խորութիւնը 2—3 մետր։ Սրանցից ամէն մինի մէջ գտնուեցան երկական տղամարդու և կնոջ երկարագլուխ կմախքներ, պպզած դրութեամբ։ Գրեթէ բոլորի միջից էլ դուրս եկան 1—3 բրոնզէ ապարանջաններ, առանց մի որևէ զարդարանքի և ուրիշ ոչինչ, և՛ ոչ մի պուլիկ։

Երանոսից Ադամխանի վրայով անցայ Վալի-Աղալու, ուր նոյնպէս բազմաթիւ դամբաններ գտայ Զոանի-քաւշան, Սանգռի դուրան, Քոռ-աղբրի գլուխ կոչուած տեղերում։ Սակայն այստեղ ես պեղումներ չկատարեցի, այլ միայն բաւականացայ դիտելով այն 15 այրերը, որ գտնւում են գիւղի արևմտեան կողմում, ուր սկսւում է մի ձորակ։ Սրանք բոլորն էլ արհեստական են, միքանիսը մինչև 6 մետր երկարութեան, 5 մետր լայնութեան և 2 մետրից աւելի բարձրութեան։ Դժուար է ասել, թէ որ ժամանակներում ծառայել են դրանք որպէս բնակարան։

Վալի-Աղալուից անցայ Ծակ-քար կամ Դալիկ-տաշ և Գեօլ գիւղերի վրայով գնացի Ադիեաման։ Թէ Գեօլում և թէ մանաւանդ Ադիեամանում կան բազմաթիւ դամբաններ։ Սրանցից մեծագոյնները լճի անմիջապէս ափին են գտնւում, իսկ աւելի փոքրերը փոքր ինչ հեռու, գիւղի մօտ։ Նկատւում է՝ որ մեծ դամբանները մի քանի շարքերով ձգւում են լճի ափին, հարաւից հիւսիս, և որքան հեռանում են դէպի հիւսիս և արևելք, այնքան աւելի մեծանում են։ Այստեղ ես պեղեցի 12 դամբան, սկսելով փոքրերից։

Առաջին դամբանի տրամագիծն էր 3, իսկ բարձրութիւնը 1½ մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 1,02 մետր, լայնութիւնը 1½ մետր և խորութիւնը 90 սանտիմետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 2 սալով։ Սրա հարաւային և արևելեան կողմերում կային մի մի տղամարդու և մի մի կնոջ երկարագլուխ կմախքներ, պպզած դրութեամբ։ Իւրաքանչիւր զոյգի առաջ դրուած էր մի պուլիկ։ Ձախ կողմի, կանանց, կմախքների վրայից էլ գտնուեցան երկական բրոնզէ ապարանջաններ։

Երկրորդ դամբանի տրամագիծն էր դարձեալ 3 մետր, բարձ-

բութիւնը $1^1/_2$ մետր։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը 40 սանտիմետր և խոր. 1,10 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 2 սալով։ Սրա մէջ, հարաւային կողմում կային մի տղամարդու, մի կնոջ և մի երեխայի կմախք, պպզած դրութեամբ և երեսները դէպի հարաւ դարձուած։ Երեխայի կմախքը հարաւ-արևմտեան անկիւնումն էր, և թևին մի փոքրիկ, բրոնզէ ապարանջան ունէր։ Սրանց առջև դրուած էր մի պուլիկ։ Գերեզմանի հիւսիսային կողմում ևս կային նոյնպէս պպզած երկու երկարագլուխ տղամարդկանց կմախքներ, երեսները նոյնպէս դէպի հարաւ դարձուած։

Երրորդ դամբանի տրամագիծն էր 2 մետր, բարձրութիւնը 72 սանտիմետր։ Գերեզմանի երկարութիւնն էր $1^1/_2$ մետր, լայնութիւնը 1 մետր և խորութիւնը $1^1/_2$ մետր։ Ուղղուած էր նոյնպէս հիւսիսից հարաւ և ծածկուած 2 սալով։ Սրա մէջ ևս, հարաւային կողմում պպզած դրութեամբ կային մի տղամարդու և մի կնոջ կմախք, երեսները դէպի հարաւ դարձուած։ Տղամարդը գտնուում էր կնոջ ձախ կողմը, գերեզմանի հարաւ-արևելեան կողմում, իսկ կինը հարաւ-արևմտեան։ Տղամարդի մօտ գտնուեց մի բրոնզէ դաշոյն, իսկ կնոջ մօտ մի ապարանջան։ Հիւսիսային կողմումն էլ կար դարձեալ պպզած ձևով մի տղամարդու կմախք, երեսը հարաւ։

Չորրորդ դամբանի տրամագիծն էր $6^1/_2$ մետր և բարձրութիւնը 2 մետր։ Գագաթը հարթ էր և շուրջանակի քարեր չէին նկատուում։ Գերեզմանը, որ բացուեց 2 մետր փորելուց յետոյ, 2 մետր երկարութիւն, մի մետր լայնութիւն և նոյնքան խորութիւն ունէր, դարձեալ անտաշ քարէ քառանկիւնի պատերով, հիւսիսից հարաւ ուղղուած և 2 մեծ սալաքարերով ծածկուած։ Հարաւային, ինչպէս և հիւսիսային, կողմերում կային երկական պպզած մարդկանց կմախքներ, մինը տղամարդու և միւսը՝ կնոջ. բոլորի երեսներն էլ դէպի հարաւ էին դարձրած։ Հարաւային զոյգի ձախակողմեանի, (տղամարդու) մէջքին կար մի լայն, բրոնզէ գօտի, որի վրայ նկատելի են նուրբ քանդակներ, մօտն էլ դրուած էր մի պուլիկ։

Հիւսիսային կողմի կմախքներից նոյնպէս ձախակողմեանի, տղամարդու, մօտ գտնուեց մի երկաթէ դաշոյն, իսկ աջակողմեանի մօտ 3 բրոնզէ մատանի և ուլունքներ։ Իւրաքանչիւր կմախքի առաջ էլ դրուած էր մի մի պուլիկ։

Հինգերորդ դամբանի տրամագիծն էր $6^1/_2$ մետր, բարձրութիւնը 2 մետր. գագաթը հարթ էր, մէջտեղում կային միքանի մեծ քարեր։ Գերեզմանի երկարութիւնն էր $2^1/_2$ մետր, լայնու-

թիւնը $1^1/_2$ մետր և խորութիւնը 1 մետր, հետևապէս և դամբանի գագաթից մինչև գերեզմանի յատակը՝ 3 մետր էր։ Գերեզմանը ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 մեծ սալաքարերով։ Սրա մէջ պպզած դրութեամբ կային քսան երկարագլուխ մարդկանց կմախքներ, որոնցից միայն մինի, հարաւայինի, վերայից դուրս եկաւ մի բրոնզէ գօտի, մի շատ փոքրիկ բրոնզէ դաշոյն և երեք նոյնպիսի մատանիներ։ Առջևում երկու պուլիկ։ Գերեզմանի յատակում կար մի ահագին սալ քար։ Սկզբում ինձ թուաց, թէ դա կարող է մի ուրիշ գերեզմանի կափարիչ լինել, ուստի և գերեզմանի մի կողմը առ ի շեղ կտրել տուի և այդ սալի տակ փորել տուի։ Երևաց, որ քարը քցովի չէր։

Վեցերորդ դամբանի տրամագիծն էր 6 մետր և բարձրութիւնը մի մետր։ Այս հողաթմբի մէջ կային 2 գերեզման, մինը միւսի կողքին։ Առաջին գերեզմանի երկարութիւնն էր $1^1/_2$ մետր, լայնութիւնը 72 սանտիմետր և խորութիւնը 1 մետր։ Ուղղուած էր ոչ թէ սովորական հիւսիսից հարաւ, այլ արևելքից արևմուտք և ծածկուած 2 մեծ սալաքարերով։ Սրա հարաւային կողմում կային երեք պպզած մարդկանց կմախքներ, որոնցից մինը տղամարդու էր, մինը կնոջ, որի մատին կար 2 բրոնզէ մատանի, և մինը երեխայի. բոլորի երեսներն էլ դէպի հարաւ էին ուղղուած։ Տղամարդու առաջ մի պուլիկ էր դրուած, իսկ երեխայի մօտ մի շատ փոքրիկ կաւէ ճրագ։ Նոյն դամբանի երկրորդ գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը $1^1/_2$ մետր և խորութիւնը մի մետր։ Սա ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած 3 սալաքարերով։ Սրա մէջ շարքով շարուած էին ութ պպզած մարդկանց կմախքներ, երեսները դէպի հարաւ ուղղուած. մէջտեղում կար մի պուլիկ։

Եօթերորդ դամբանը շատ աւելի մեծ էր և ունէր 10 մետր տրամագիծ, միայն բարձրութիւնը $1^1/_2$ մետրից աւելի չէր։ Գագաթը հարթ էր և շուրջանակի քարերով պատած։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր 16 սանտիմետր, լայնութիւնը $1^1/_4$ մետրը և խորութիւնը՝ 1 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած մի մեծ սալաքարով, որ $3^1/_2$ մետր երկարութիւն, 3 մետր լայնութիւն և 70 սանտիմետր հաստութիւն ունէր։ Սրա հարաւային կողմում պպզած դրութեամբ կային երեք երկարագլուխ կմախքներ, որոնցից միջինի մէջքի վրայից դուրս եկաւ մի բրոնզէ դաշոյն, իսկ կողքերի երկու կմախքների մինի թևից մի բրոնզէ ապարանջան, իսկ միւսի մատից 3 բրոնզէ մատանի։ Կմախքների քննութիւնից երևաց, որ միջինը տղամարդ, իսկ կողքի երկուսը կանայք են եղել։ Սրանց բոլորի երեսներն էլ դէպի

հարաւ էր ուղղուած։ Հիւսիսային պատի մօտ ևս կար մի այր մարդու կմախք, պպզած դրութեամբ և երեսը դէպի հարաւ դարձրած։

Ութերորդ դամբանն աւելի ևս մեծ էր, 11 մետր տրամագծով, և $2^1/_2$ մետր բարձրութեան. գագաթը բոլորովին հարթ։ Գերեզմանի երկարութիւնն էր 2,20 մետր, լայնութիւնը 60 սանտիմետր և խորութիւնը 65 սանտիմետր, ուղղուած էր հիւսիսից հարաւ և փոխանակ սալ քարերի, փայտով էր ծածկուած, որ բոլորովին փտել էր։ Գերեզմանի մէջ, հիւսիսից հարաւ ուղղութեամբ և երեսը դէպի հարաւ ուղղուած պառկած էր մի մարդու կմախք։ Ո՛չ մի իր կամ ման չկար մօտը։

Իններորդ դամբանը 9 մետր տրամագիծ ունէր, և 2 մետրը բարձրութիւն։ Գագաթը հարթ էր, միայն մէջ տեղում նկատելի էր քարերի մի շրջան։ Գերեզմանը բաւական կարճ էր, միայն $1^1/_2$ մետր, լայնութիւնը մի մետր և խորութիւնը մի մետրը։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երկու սալ քարերով։ Սրա մէջ, հարաւային կողմում, կար մի պպզած տղամարդու կմախք, երեսը դէպի հարաւ դարձրած, կողքին մի շուն և մի պուլիկ։ Կմախքի մէջքին կար մի բրոնզէ դաշոյն և բաղանման 2 պանդլոք, թեւին մի բրոնզէ ապարանջան և ուլունքներ։

Միւս երեք դամբաններն առանձին ուշադրութեան արժանի չէին։

Ցաւելով որ միջոցներս չեն ներում աւելի մեծ դամբանները պեղելու, ես անցայ դէպի վերին Ադիեաման, ուր նոյնպէս կան բաւականաչափ դամբաններ, մանաւանդ Իշխանաց ձորում։ Սակայն սրանք համեմատաբար փոքր են։ Ի նկատի առնելով այն, որ այս գիւղը միայն 3 կիլոմետր հեռու է համանուն գիւղից, ուր պեղումներ կատարեցի, ես բաւականացայ այստեղ միայն մի դամբան պեղելով։ Սա միանգամայն նման էր վերոյիշեալներին։ Դամբանի տրամագիծը հասնում էր 3 մետրի, իսկ բարձրութիւնը մինչև մի մետրի։ Գերեզմանի երկարութիւնն էր 2 մետր, լայնութիւնը $1^1/_2$ և խորութիւնը 1 մետր։ Ուղղուած էր հիւսիսից հարաւ և ծածկուած երեք սալ քարերով։ Գերեզմանի հարաւային կողմում պպզած դրութեամբ կային մի տղամարդու, մի կնոջ և մի երեխայի կմախքներ, պպզած դրութեամբ։ Երեխայի և կնոջ թեւերին կային բրոնզէ ապարանջաններ։ Առաջներում դրուած էր 2 պուլիկ։ Հիւսիսային կողմում էլ կար մի տղամարդու կմախք, նոյնպէս պպզած դրութեամբ։

Այստեղից անցայ Ներքին Ղարանլուղ գիւղը, որ հեռու է մօտ տասն կիլոմետր և տարածւում է լճի ափին։ Այստեղ ես

դամբաններ չգտայ, ոչ թէ այն պատճառով, որ այս հարթ, գեղեցիկ ափը չէ գրաւել նախապատմական մարդկանց, այլ որովհետև այժմեան բնակիչներն իրենց բնակարանների և ծառաստանների համար ամէն հողակոյտ հարթել, հաւասարեցրել են գետնին։ Ծերունիները պատմում էին, որ իրենց երիտասարդութեան ժամանակ այդպիսի բաներ շատ էին գտնում, սակայն ոչ էր ուշադրութիւն դարձնում։ Ապա անցայ Ալիղոբիս և սրանից մօտ 2 կիլոմետր հեռու գտնուող Զոլախաչ գիւղերը, որոնց շուրջը կան բաւականաչափ դամբաններ։ Սրանցից պեղեցի միայն երեքը, որոնց միջից դուրս եկած իրերը միանգամայն ապացուցին ինձ, որ սրանք, համեմատաբար, աւելի յետի ժամանակի էին, որովհետև գտնւում էին երկաթեայ իրեր և բացի դրանից թէ բրոնզէ իրերը և թէ կաւէ ամանները աւելի նուրբ և գեղեցիկ էին։ Այս դամբաններն էլ գետնից 1—1½ մետր բարձրութիւն ունին, 3—4 մետր տրամագիծ։ Իմ բացած 3 դամբանների գերեզմաններն ուղղուած էին հիւսիսից հարաւ, և ծածկուած երկու կամ երեք քարով։ Երեքի մէջն էլ մի մի կմախք կար, հիւսիսից հարաւ ուղղուած, բոլորն էլ երկարագլուխ։ Սրանցից առաջնի մօտ գտնուեց մի երկաթէ թուր, որ բոլորովին փտել էր, մնացել էր միայն բրոնզէ երախակալը, որ չափազանց գեղեցիկ է։ Մօտն էլ կային երկու պուլիկներ։ Երկրորդի մօտից դուրս եկաւ մի երկաթէ նիզակ, 2 բրոնզէ մատանի և 3 պուլիկ, իսկ երրորդի մօտից միքանի կոտրատուած պուլիկներ և մի երկաթէ թուր։

Շարունակելով ճանապարհս դէպի Քեօլաղռան, ես դամբաններ գտայ սեպաձև արձանագրութիւնից փոքր ինչ հարաւ, մի հինաւուրց ամրոցի ստորոտում, սակայն ինձ չաջողուեց այստեղ պեղումներ կատարել, որովհետև հունձն սկսուած լինելու պատճառով մշակներ չգտնուեցին։ Այս հանգամանքը ստիպեց ինձ աւելի արագութեամբ անցնելու դէպի Զաղալու, դիտելով այն հակայական դամբանները, որ ձգւում են լճի ափին, մանաւանդ Նարփուզլու Թրքաբնակ գիւղի մօտ։ Սրանցից երեքը բարձրանում են անմիջապէս ճանապարհի ձախ կողմին, լճից հազիւ 20 մետր հեռու։ Սրանք կըլինեն մօտ 7—9 մետր բարձրութեան, նոյնքան էլ տրամագծով, միայն սրանց գագաթները տափարակ չեն, այլ սուր. մինի վրայ մեծ մեծ քարեր ցցած։ Նոյն իսկ գիւղացիները հասկացել են, որ սրանք բնական բլուրներ չեն, և փորձել են մինը քանդել, սակայն մինչև գերեզմանը չեն հասել։

Զաղալու գիւղի արևելա-հիւսիսային մասում, լճի անմիջապէս ափին, ձգւում են մի շարք փոքրիկ դամբաններ, սուր գագաթներով, մօտ 2 մետր բարձրութեան։ Գիւղացիները պատմում

էին, որ սրանցից միքանիսը իրենք բացել են։ Մինչև գետնի մակերևոյթը քանդելուց յետոյ բացուել են վեց տափարակ սալերից բաղկացած գերեզման, հիւսիսից հարաւ ուղղուած, որի մէջ նոյն ուղղութեամբ, գլուխը հիւսիսային կողմում, պառկած էր լինում մի կմախք, երեսը դէպի հարաւ դարձրած։ Սրա երեսի վրայ դրուած էր լինում ապակեայ մի կամ երկու սրուակ։ Այսպիսի սրուակներից ինձ տուին երկուսը։ Սրանք արտասուքի սրուակներ էին։

Շրջելով գիւղի շրջակայքը, ես գտայ մի փոքրիկ ստորերկրեայ անցք, որից գոլորշի էր բարձրանում։ Ինձ ուղեկցող քահանան և գիւղացիները վկայեցին, որ ձմեռը այդ անցքի վրայի ձիւնն անմիջապէս հալւում է։ Ես քննեցի այդ անցքի շուրջը և նկատեցի հիմնապատերը, որից ենթադրեցի, որ դա հաւանականօրէն հրաբղխային բերան է, որի վրայ մեհեան է կառուցուած եղել։ Մի այսպիսի հրաբղխային բերան էլ ես նկատել էի Նորադուզ գիւղի մօտ, Շորգեօլ կոչուած տեղում, որի շուրջը նոյնպէս կան շինութեան հետքեր։

Զաղալուից ես անցայ Բասար-գեչար, Մազրա, Զոդ, սակայն այս ընդարձակ տարածութեան վրայ ես չնկատեցի և ոչ մի դամբան։ Ինձ թւում է, թէ այս, այսինքն լճի արևելեան ափում, բրոնզի դարի մարդը բնակութիւն չէ հաստատել, երկիւղ կրելով այն սառնաշունչ քամիներից և 6—7 ամիս տևող դառնաշունչ ձմեռից, որ տիրում է այստեղ։ Նոյն իսկ հայոց բնակութեան ժամանակ այս գաւառակը կոչուել է Սոդք, այժմեան աղաւաղութեամբ Զոդ, որ խիստ է նշանակում։

Առ այժմ բաւականալով այս չափով, օգոստոսի 10-ին ես վերադարձայ Նոր-Բայազէտ։